պատասխանատու է ինքը արտաքին գործոց նախարարը, իբրեւ պաշտօնապէս ստորագրող մի անձ»:

Ժորտանիա.— «Ո՛չ, այդպիսի պաշտօնական ստորագրութեան համար պատասխանատու է ամբողջ կառավարութիւնը»:

Զօր. Ուօկկեր.— «Այդ դէպքում, ես առաջարկում եմ գնահատել թերթերում հնչեցեալ յայտարարութիւնը (կարդում է յայտարարութեան պատճէնը, որը այս օրերս պէտք է յանձնուի կառավարութեան): Իմ առաջարկած արտայայտութիւնները ամենամեղմն են, եւ ես գործածեցի միայն ի յարգանս Վրաստանի եւ իր կառավարութեան եւ պարոն Գեղեչկորիի հանդէպ տածած բարեկամութեանս պատճառով: Ես յոյս ունեմ, որ Վրաստանի կառավարութիւնը կ'անէ մեզ այդ դիջումը»:

Ժորտանիա.— «Ամէն բան, որ կապ ունի գնդ. Գեռեւանովի միջադէպի հետ, մանրամասնութիւնների պարզաբանութիւնից յետոյ, կ'ուզուի աւելի մեծ չափով, քան պահանջում է զօրավարը»:

Զօր. Ուօկկեր.— «Ոչինչ աւելի զոհացուցիչ բան չի կարող լինել: Հիմա ես կ'անցնեմ առաջ եւ կը չօշափեմ այն հարցերը, որոնց մասին խօսում էր վարչապետը: Եթէ ես չեմ սխալւում, վրաց ժողովուրդը հիասթափուա՞ծ է Մեծ-Բրիտանիայից»:

Ժորտանիա.— «Այո՛, Մեծ-Բրիտանիայի վարկը խախտել է Կամաւորական բանակի յառաջխաղացումով»:

Զօր. Ուօկկեր.— «Կրկնում եմ, որ ես աւելի քան որեւէ մէկը ցաւում եմ պատահածի համար եւ ամէն միջոց գործ կը դնեմ, որպէսզի այդ տխուր միջադէպը հաղթեմ: Այժմ ես կ'անցնեմ այն պատճառներին, որոնց կապակցութեամբ դուք խօսում էիք վարկի անկման մասին Հայաստանի հետ*), եւ պարտք եմ համարում ասել, որ, երբ պայթեց այդ պատերազմը, Վրաստանի հողի վրայ ոչ մի անգլիական զինուոր չկար»:

Ժորտանիա.— «Որպէսզի թիւրիմացութիւն չլինի, պէտք է նախազգուշացնեմ ձեզ, որ ես խօսում էի միայն զուգադիպութեան մասին: Ես ինքս էլ Դաշնակից պետութիւնների ջերմ կողմնակից եմ եւ լինելով զբաղումով հրապարակախօս՝ պատերազմից առաջ էլ, պատերազմի ընթացքում էլ միշտ դրել եմ ի պաշտպանութիւն Անգլիայի եւ Ֆրանսայի, բայց, կրկնում եմ, չնորհիւ այս տխուր զուգադիպութեան, հանրային կարծիքն ու ժողովուրդը բոլոր կատաղուող դէպքերը դնում են Դաշնակիցների դալու հետ անմիջական կապակցութեան մէջ եւ պահանջում են իրենց կառավարութիւնից այդ մասին բացատրութիւն»:

Զօր. Ուօկկեր.— «Պատերազմը**) սկսուեց մեզանից առաջ, եւ Վրաստան հասնելուց յետոյ մեր առաջին խնդիրը եղաւ արիւնհեղութեան առաջն առնել: Իսկ ինչ վերաբերում է Արտահանի եւ Ախալցխայի շրջանների դէպքերին, անգլիական մի սպայ, որ ուղարկուած էր այնտեղ պարզելու համար այդ տխուր թիւրիմացութեան բոլոր հանգամանքները եւ որ բերեց այնտեղից զեկուցում, հաղորդում է, որ վրացիներն առաջինը անցան սահմանը: Արտաքին գործոց նախարարը կարող է խօսել այդ սպայի հետ եւ նրանից ստանալ ամենատոյդ տեղեկութիւններ: Թիւրիմացութիւնները վրացի ու մահմեդական-թաթար ազգաբնակութեանց միջեւ առաջին անգամ սկսուեցին Վրաստանի հողի վրայ, բայց ես արդէն առաջ նախազգուշացրել եմ ձեր կառավարութիւնը, որ պատասխանատուութիւն չեմ վերցնում նախկին Թիֆլիսի նահանգի ներքին անդորրութեան համար: Ես տեղեկութիւններ ունեմ, որ վրաց զինուորները տեղական ազգաբնակութեան վերաբերմամբ վատ են վարուել: Ինձ յայտնի է, որ 3000 վրացի զինուորներ փախել են 1500 թաթարներից, թողնելով վիրաւորներ, որոնց հաւաքել է թշնամին եւ յանձնել անգլիացիներին: Զօրքերը չէին լսում զօր. Մաղնիեւին:

«Բոլոր մանրամասնութիւնները եկող

---

*) Ըստ երեւոյթին, այս կէտը լաւ չի արձանագրուած. խմբագրը լաւ չի հասկացուած, թէեւ պարզ է, որ Ժորտանիան ինչ որ զանգատ է արել Հայաստանի վերաբերմամբ: Ս. Մ.

**) Խօսքը հայ-վրացական պատերազմի մասին է: Ս. Մ.